

ԿԱՐԾԻՔ

Սիրանուշ Էդուարդի Ղազարյանի՝ «Ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման ռազմավարությունը անգլերենի ուսուցման ընթացքում» թեմայով թեկնածուական ատենախոսության՝ ներկայացված ԺԳ.00.02 – «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Մի քանի լեզվով խոսելու կարողությունը դարձել է ժամանակի անխուսափելի պահանջ, իսկ բազմալեզվությունը՝ 21-րդ դարի անհատի կենսակերպ: Գլոբալացման, միջմշակութային հաղորդակցության և միջազգային համագործակցության աճող դերի պայմաններում բազմալեզու անհատը ոչ միայն ավելի մրցունակ է, այլև ավելի լավ է ադապտացվում փոփոխվող միջավայրին: Բազմալեզվությունը նպաստում է ոչ միայն մասնագիտական հաջողությանը, այլև մշակութային հաղորդակցությանը, ինքնազարգացմանը և անհատի սոցիալական ինտեգրմանը: Միջին հաշվարկներով, աշխարհի բնակչության մոտ 10-15%-ն է տիրապետում 3 կամ ավելի լեզուների: Եթե աշխարհի բնակչությունը մոտ 8 միլիարդ է, ապա 3 օտար լեզվով խոսողների թիվը հասնում է 800 միլիոնից մինչև 1.2 միլիարդ մարդ, հետևաբար, Սիրանուշ Էդուարդի Ղազարյանի ատենախոսության թեման չափազանց արդիական է, քանի որ վերաբերում է մի միտումի, որը տարեց-տարի ավելի է տարածվում աշխարհում, ուստի զուգահեռաբար անհրաժեշտ է կատարելագործել այն գործիքները, որոնք կիրառվում են լեզուների դասավանդման մեթոդաբանության մեջ: Չնայած Հայաստանում ստեղծված են բնական նախադրյալներ եռալեզու ուսուցման համար, կրթական համակարգը չափազանց ուղիղ է այդ փոփոխությունների հանդեպ, և այս պահին գրեթե չկան բուհեր կամ մասնագիտական ծրագրեր, որոնք միաժամանակ որակավորում են տալիս շրջանավարտին՝ միանգամից 2, էլ չասած, 3 օտար լեզու դասավանդելու համար:

Բրյուսովի անվան պետական համալսարանը՝ որպես ՀՀ առաջատար լեզվաբանական բուհ, տարիների ընթացքում պահպանել և իրականացնում է երկլեզու ուսուցիչներ պատրաստելու կրթական ծրագիր իրականացնելու ավանդույթը, սակայն այժմ քիչ են

նմանատիպ ծրագրերը ՀՀ այլ բուհերում, և դա հակասում է համաշխարհային զարգացումներին, չհաշված՝ անտեսվում է խնդրի տնտեսագիտական նպատակահարմարության կողմը, քանի որ երկլեզու ուսուցչի ծանրաբեռնվածությունը հատկապես գյուղական դպրոցներում կլուծի ուսուցչի դրույքով ապահովելու խնդիրը և՛ առկա սրընթաց ժողովրդագրական աղետի պայմաններում, երբ տարեց-տարի գյուղական վայրերի բնակչության արտահոսք կա, և միայն անգլերենի կամ միայն ռուսերենի կամ ֆրանսերենի ժամաքանակը բավարար չէ ուսուցչի դրույքն ապահովելու և պատշաճ աշխատավարձով նրան ապահովելու համար, այս մոտեցումը՝ երկլեզու և եռլեզու ուսուցիչներ պատրաստելու համար, փայլուն հիշեցում է և նույնիսկ ազդանշան կրթական ոլորտի պատասխանատուներին՝ վերանայել ՀՀ լեզուների ուսուցիչների պատրաստման ընդհանուր հարացույցը, մշակել և ներդնել նորարար ծրագրեր՝ մի քանի օտար լեզուներ դասավանդող ուսուցիչներ պատրաստելու նպատակով:

Այսպիսով, մեր երկրում բոլոր խնդիրները շաղկապված են, և այդ համատեքստում ավելի արդիական են այն հետազոտական թեմաները, որոնց մեջ բարձրացված խնդիրների լուծումը կնպաստի մուլտիպլիկատիվ դրական փոփոխությունների:

Հենվելով վերոգրյալին՝ ակնհայտ է դառնում, որ ատենախոսության թեման, նպատակը և խնդիրները կարևոր են հատկապես Հայաստանի լեզուների դասավանդման մեթոդաբանության ուսումնասիրությունների շարքում, քանի որ հեղինակը թիրախավորել է բարձրագույն կրթությունը, լեզուների ուսուցումը և շեշտադրում է այն փաստը, որ ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացումը պետք է ընթանա բազմամշակութային կարողունակությունների զարգացմանը զուգահեռ և հիմնվի ճանաչողական-հաղորդակցական մոտեցման վրա, իսկ մենք գիտենք, որ դրա առավելությունն այն է, որ հենց դրա շնորհիվ է ապահովվում ամբողջական և արդյունավետ ուսումնական գործընթաց, և ուսանողները՝ սովորելով նոր լեզու, ավելի լավ են ընկալում նաև մշակութային տարբերությունները, ինչը նրանց առջև բացում է մասնագիտական և անձնական զարգացման նոր հնարավորություններ:

Այս մոտեցումը ներառում է լեզվական պատրաստվածությունը և միջմշակութային կարողունակությունը: Դա թույլ է տալիս սովորողներին ոչ միայն տիրապետել լեզվին, այլև հասկանալ երրորդ լեզվի մշակութային համատեքստը:

Այս հարցում կարևոր է մշակել և ներդնել ռազմավարություններ, որոնք կդարձնեն նոր օտար լեզուների ուսուցման գործընթացը ավելի արդյունավետ, արագ և դյուրին:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նաև հետևյալ գործոններով:

- Անհրաժեշտ է ուսանողների լեզվական հմտությունները զարգացնել այնպես, որ նրանք կարողանան հեշտությամբ ինտեգրվել բազմալեզու և բազմամշակութային միջավայրերում:
- ՀՀ-ում համապատասխան հիմնարար հետազոտությունների բացակայությունը թեմային տալիս է հետազոտական մեծ արժեք:
- Ատենախոսությունը լրացնում է օտար լեզուների ուսուցման մեթոդաբանության բնագավառը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով երրորդ օտար լեզվի ուսուցման գործընթացում բազմալեզու կարողունակությունների զարգացման մեխանիզմներին:
- Այն ներառում է նորարարական ռազմավարություններ և մեթոդներ, որոնք կարող են կիրառվել լեզվակրթական այլ հետազոտությունների համար: Այս չորս գործոնը կարևոր է գնահատելու աշխատանքի տեսական արժեքը:

Սիրանուշ Ղազարյանի հետազոտությունն ունի նաև կիրառական արժեք: Ատենախոսության արդյունքները կարող են ներդրվել ՀՀ բուհերում անգլերենի և այլ օտար լեզուների ուսուցման մեջ: Առաջարկվող ռազմավարությունները կարող են օգտագործվել նոր ուսումնական ծրագրերի և ուսուցման մեթոդների ստեղծման համար:

Փորձարարական ուսումնասիրությունների արդյունքները ցուցադրում են ուսուցման արդյունավետության հստակ բարելավում:

Ս. Ղազարյանի ատենախոսության նորույթը ևս նրա հետազոտության ուժեղ կողմն է, քանի որ աշխատանքում.

- մշակվել և փորձարկվել է ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման ռազմավարության մոդել:
- առաջարկվող ռազմավարությունները ներառում են լեզվահաղորդակցական, ճանաչողական, վերլեզվական և վերճանաչողական հմտությունների համակցված զարգացումը:

Ատենախոսության եզակիությունն այն է, որ այն ներկայացնում է ռազմավարություններ, որոնք հիմնվում են միջլեզվային փոխազդեցությունների վերլուծության վրա, ինչպես նաև ներմուծվում է «Մատրյոշկա» մոդելը՝ հասկանալու լեզուների փոխհարաբերությունները:

Աշխատանքի առաջին՝ **«Ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման առանձնահատկությունները»** անվանմամբ գլխում, հիմնական առանցքը կապված է ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման անհրաժեշտության հետ: Հեղինակի կողմից ընդգծվում է, որ բազմալեզվությունը պետք է զուգակցվի բազմամշակութային կարողունակությունների զարգացման հետ, ինչը կարևոր է լեզուների արդյունավետ յուրացման համար: Այստեղ նաև ներկայացված են այն լեզվաբանական, կրթական և հաղորդակցական տեսությունների հենքի վրա հիմնված մոտեցումները, որոնք հիմք են հանդիսացել ատենախոսության գործնական խնդիրները վերլուծելու համար: Աշխատանքի առավելություններից մեկն այն է, որ այստեղ հեղինակը ներկայացնում է տեսականորեն հարստացված, համակարգված և խորքային մոտեցում, որը ներառում է բազմալեզվության, ուսուցման մեթոդների և միջլեզվային փոխազդեցությունների համալիր վերլուծություն: Այս գլխում ներկայացված են տեսական հիմքեր, որոնք ամրապնդում են ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման անհրաժեշտությունը՝ ժամանակակից լեզվակրթության համատեքստում: Այստեղ ատենախոսը ներկայացնում է հիմնական հասկացությունների (կարողունակություն, լեզվական կարողունակություն, հաղորդակցական կարողունակություն և այլն) սահմանումները, ստեղծում ուսումնասիրության տեսական հիմքը, ինչը ապահովում է հստակություն և տրամաբանականություն հետագա վերլուծությունների համար: Ս. Ղազարյանը նաև ներկայացնում է բազմալեզվության դրսևորումները (հետընթաց, առաջընթաց, հետընթաց-առաջընթաց), ինչը կարևոր է ուսուցման գործընթացում ուսանողների տարբեր լեզվական փորձառությունների ճիշտ վերլուծության համար:

Ատենախոսության հեղինակը երրորդ օտար լեզվի ուսուցման առանձնահատկությունների բացահայտում է կատարում, մասնավորապես, կարևորվում է ուսուցման հաղորդակցական-ճանաչողական մոտեցման և նախնական գիտելիքների ու

հմտությունների վրա հիմնվելու անհրաժեշտության շեշտադրումը, ինչը նպաստում է լեզվակրթական գործընթացի արդիականացմանը:

Այս գլուխը կարևոր է միջլեզվային փոխազդեցությունների բացահայտման առումով ևս, ինչը հնարավորություն է տալիս ուսումնասիրել լեզվական փոխադարձ ազդեցությունները, համեմատությունները և դրանց կրթական կիրառությունները:

Ն. Բարիշնիկովի «Մատրյոշկա» հայեցակարգի կիրառումը տեսական նյութը դարձնում է ավելի տեսանելի և կիրառելի, ինչը նպաստում է բազմալեզու ուսուցման մեթոդների յուրացմանը: Բազմալեզվության և բազմամշակութայնության միջև կապի վերլուծությունը աջակցում է լեզվակրթության համապարփակությանը: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ուսանողներին ավելի արդյունավետ ինտեգրվել գլոբալ հաղորդակցային միջավայրերին:

Սիրանուշ Ղազարյանի կողմից բոլոր տեսությունների ինտեգրումն աշխատանքի մեջ, հղումները Բ. Հուֆայգենի և Գ. Նոյների տեսություններին, ինչպես նաև միջազգային և ազգային լեզվաբանական հետազոտություններին, բարձրացնում են ներկայացված նյութի ուսումնասիրության համակողմանիությունը:

Այստեղ նաև ներկայացված է ուսուցման բազմաշերտ մոտեցում՝ ներառելով լեզվաբանական, ճանաչողական և սոցիալական տեսությունները:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Բազմալեզու կարողունակությունների զարգացման ռազմավարությունը»** վերտառմամբ, նվիրված է ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման փորձարարական և մեթոդական հիմունքներին, ինչը կարևոր է և ունի կիրառական արժեք: Այս գլուխն առանձնանում է մի շարք ուժեղ կողմերով, որոնք բարձրացնում են հետազոտության գործնական և գիտական արժեքը:

Սույն գլուխն ունի կիրառական ուղղվածություն և հիմնված է փորձարարական ուսումնասիրությունների վրա, որոնք ապահովում են ներկայացված մեթոդների և ռազմավարությունների արդյունավետության ստուգումը, իսկ փորձարարական տվյալների կիրառությունը թույլ է տալիս ատենախոսին ցույց տալ լեզվաբանական կրթության բարելավման հնարավորությունները՝ հիմնված ուսանողների լեզվական, ճանաչողական և վերլեզվական կարողությունների զարգացման վրա:

Այս գլխում Ս. Ղազարյանը կիրառում է այնպիսի նորարարական մեթոդներ, ինչպիսիք են **միջլեզվային փոխազդեցությունների ինտեգրումը**¹ լեզուների միջև կապերի խորացման միջոցով, **վերլեզվական և վերճանաչողական հմտությունների ակտիվացումը**, որոնք խթանում են ուսանողների ինքնուրույնությունը և մտածողության խորությունը, ինչպես նաև «Մատրյոշկա» մոդելի կիրառումը, որը թույլ է տալիս հասկանալ լեզվական հմտությունների շերտային կառուցվածքը և փոխազդեցությունը: Լիովին համաձայն եմ ատենախոսի հետ այն հարցում, որ ռազմավարությունը ոչ մեթոդ է, ոչ պլան է կոնկրետ նպատակի կամ արդյունքի հասնելու համար, այլ ցանկալի նպատակին հասնելու համար մշակված ծրագիր է, այդ ծրագիրն իրականացնելու ուղին, ուղղությունը»¹: Հեղինակն այստեղ կարևորում է ռազմավարության ձևավորման համար Հ. Գարդնիերի տեսությունը, որը մի քանի քայլ առաջ է տանում ոչ միայն լեզուների ուսուցումը, այլև այլ առարկաների ուսուցումը՝ հենվելով նրա բազմակի ինտելեկտի տեսության վրա: Տարբեր ինտելեկտի տերմարդկանց համար ռազմավարությունները ևս պետք է լինեն տարբերակված, և այս ռազմավարությունը հնարավորություն է տալիս նոր ճանապարհային քարտեզ ունենալ տարբեր կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների համար: Բացի այդ, Ս. Ղազարյանը չի սահմանափակում ռազմավարությունը միայն դասավանդողների՝ նպատակներին հասնելու ճանապարհով, այլև «սովորողների կողմից ուսումնառության նպատակով կիրառվող գործողությունների ամբողջություն է առաջարկում՝ համապատասխան կարողունակությունների ձևավորման և/կամ զարգացման նպատակով» /էջ 81/: Իսկապես, երկու օտար լեզուների տիրապետող ուսանողը երբեմն չի գիտակցում, որ ունի բավականին «պաշար»՝ երրորդ լեզուն ավելի արդյունավետորեն սովորելու համար: Այս պարագայում դասավանդողը պետք է «..կարողանա ակտիվացնել ուսանողների ճանաչողական և վերճանաչողական կարողությունները, և դա կիրառի՝ ի նպաստ ուսուցման առավել արդյունավետ գործընթացի» /էջ 82/:

Աշխատանքի երկրորդ գլուխը ցույց է տալիս, թե ինչպես կարող են բազմալեզու կրթական մոտեցումները նպաստել ուսանողների սոցիալական և միջմշակութային հմտությունների զարգացմանը: Ուշադրության կենտրոնում է ուսանողների

¹ Ս.Է. Ղազարյան, Ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման ռազմավարությունը անգլերենի ուսուցման ընթացքում, ատենախոսություն մանկավարժական գիտությունների գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2024. - էջ 80:

հաղորդակցական և սոցիալական հմտությունների բարելավումը, ինչը նրանց դարձնում է ավելի մրցունակ գլոբալ շուկայում:

Այս գլխում հեղինակի կողմից առանձնացված է ինը ռազմավարություն: Հեղինակի կողմից առաջարկվող մոդելի երրորդ մակարդակում հեղինակը նշում է այն մեթոդները, որոնք արդյունավետ կլինեն յուրաքանչյուր ռազմավարության շրջանակում, չորրորդ մակարդակում՝ այն առաջադրանքները, որոնք կարող են նպաստել յուրաքանչյուր ռազմավարության արդյունավետ կիրառմանը:

Անկասկած, աշխատանքի փորձարարական արդյունքների ներկայացումը ատենախոսության ևս կարևորագույն ձեռքբերումներից է:

Սիրանուշ Ղազարյանի ատենախոսության եզրակացությունները լիարժեքորեն ամփոփում են կատարված աշխատանքը:

Ատենախոսության գրականության ցանկը պարունակում է 147 անուն հայրենական և արտասահմանյան հետազոտողների հիմնարար աշխատանքներ՝ մենագրություններ, հոդվածներ, առցանց և տպագիր, այլ հրապարակումներ՝ տպագրված միջազգային հեղինակավոր գիտական հանդեսներում և միջազգային գիտաժողովների ժողովածուներում, որոնք համակողմանի են քննարկում հետազոտության թեման և ապահովում խնդիրների լուծումը:

Սիրանուշ Ղազարյանի ատենախոսության եզրակացությունները լիարժեքորեն ամփոփում են կատարված աշխատանքը:

Ատենախոսության հավելվածները կարևոր գործառույթ են կատարում՝ ապահովելով հետազոտության ամբողջականությունն ու գործնական կիրառելիությունը: Հավելվածները ներկայացնում են փորձարարական տվյալներ, մեթոդական նյութեր և գործիքակազմ, որոնք ուժեղացնում են հետազոտության արժեքը: Հավելվածներում ներառված նյութերը համընդհանուր կիրառելիություն ունեն և կարող են հարմարեցվել տարբեր լեզվաբանական և կրթական համատեքստերում:

Աշխատանքում Ս. Ղազարյանը կիրառում է աղյուսակներ, գծագրեր ու դիագրամներ, ներառյալ գրաֆիկներ, գծապատկերներ, որոնք բարդ տեղեկատվությունն ավելի հասանելի են դարձնում՝ տեսողականորեն ցուցադրելով կատարված հետազոտության միտումները, հարաբերությունները և գործընթացները: Սա ոչ միայն նպաստում է ուսումնասիրվող

երևույթների ավելի լավ ընկալմանը, այլև ամրապնդում է փաստարկը՝ եզրակացությունները դարձնելով ավելի համոզիչ: Տվյալների վիզուալիզացիան ատենախոսության մեջ աջակցում է նյութի տրամաբանական ներկայացմանը՝ հետազոտությունն ավելի մատչելի և հետաքրքիր դարձնելով ավելի լայն լսարանի համար:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված 11 հոդվածները լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Այնուամենայնիվ, կան որոշ դիտարկումներ, որոնց ևս կուզենայի անդրադառնալ:

1. Ցանկալի կլիներ, եթե ատենախոսն իր աշխատանքում նաև դիտարկեր Ա.Ա. Անդրեևի կողմից առաջարկված «դիդակտիկ եռալեզվության /дидактический трилингвизм/» տեսությունը, որը գնահատում է ուսուցման արդյունավետությունը վեկտորային ցուցանիշով: Սա հնարավորություն է տալիս դիտարկել հնարավոր տարբերակները և ընտրել ռացիոնալը՝ օգտագործելով մաթեմատիկական մեթոդներ՝ գործողությունների հետազոտման և համակարգային վերլուծության միջոցով: Արդյունքի նպատակին համապատասխանության աստիճանի, ծախսված ժամանակի և ռեսուրսների որակի հաշվառումն ուսուցման գործընթացի արդյունավետության գնահատման համար թույլ է տալիս ստանալ վեկտորային ցուցանիշ, որը ներառում է երեք բաղադրիչ. Ո – ուսուցման որակը (արդյունավետություն), Ռ – ռեսուրսների որակը, Ժ – ծախսված ժամանակը: Կարծում եմ այս մեթոդը կուղղորդի դասավանդողին՝ ճշգրիտ հաշվարկի միջոցով ընտրել ավելի արդյունավետ ռազմավարություն:

2. Լավ կլիներ, եթե հեղինակը, ներկայացնելով Հավելվածի մեջ վարժությունների տեսակներն ըստ ռազմավարությունների, զուգահեռ ներկայացներ նաև դրանց կիրառման ավելի մանրամասն ուղեցույցներ, որոնց միջոցով դասախոսները կկարողանային հստակ հասկանալ, թե ինչպես կարելի է ինտեգրել նշված ռազմավարությունները բուհերի դասավանդման գործընթացում: Կիրառական հատվածը, որը կներառեր օրինակներ և մանրամասներ, կարող էր նպաստել ռազմավարությունների ավելի արդյունավետ կիրառմանը ուսումնական միջավայրում: Հետագայում հեղինակը կարող է արդեն կատարված աշխատանքի հիման վրա

մշակել ուղեցույց, որտեղ կնկարագրի մանրամասն ձևով, թե ինչպես ուսանողներին պատրաստել, կազմակերպել և իրականացնել այդ բոլոր առաջադրանքները:

3. Աշխատանքում ներկայացված չեն այն հիմնական սխալները և խոչընդոտները, որոնք նրանք արձանագրել էին առաջադրանքները կատարելիս, լավ կլիներ հեղինակի կողմից ներկայացվել հիմնական սխալների և խոչընդոտների ցանկ:

4. Լավ կլիներ, որ հեղինակը՝ եզրակացություններից բացի, ներկայացներ նաև առաջարկություններ՝ բուհերի անգլերենը որպես 3-րդ լեզու դասավանդողներին, թե ինչպես կարելի է բարելավել ուսուցման արդյունավետությունը, ինչպես նաև առաջարկեր մեթոդներ և գործնական լուծումներ՝ հիմնված իր կատարած հետազոտությունների արդյունքների վրա: Առաջարկությունները կօգնեին ուսումնասիրության տեսական և գործնական արդյունքները վերածել կոնկրետ գործնական քայլերի, որոնք կարող էին օգտագործվել ուսուցիչների, մանկավարժների և ուսումնական ծրագրեր մշակողների կողմից: Դրանք ուղղակիորեն կապահովեին կապը հետազոտության և կրթական ոլորտում դրա գործնական կիրառման միջև: Ատենախոսը կարող էր նաև առաջարկություններ ներառել՝ հետագայում այս թեման ուսումնասիրող գիտնականներին՝ ընթացքում բացահայտված նոր հետազոտական ուղղությունների վերաբերյալ:

5. Կան նաև մի քանի վրիպումներ.

ա/ «Գիտամեթոդական գրականության վերլուծությունը և իրականացված հետազոտական աշխատանքը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրահանգումները»/ թվի համաձայնեցում, Ատենախոսության սեղմագիր, էջ 16/

բ/ Գրականության ցանկում որոշ անգլերեն հոդվածների վերնագրերի լիմաստ բառերը սկսվում են փոքրատառով, որոշներինը՝ մեծատառով, որը խախտում է գրականության ցանկի հանդեպ կիրառված միասնական մոտեցումը /օրինակ՝ 111, 114, 116, 119 – ներկայացված են մեծատառով, 113 – ներկայացված է փոքրատառով/: 153 էջում նշված թիվ 28 աղբյուրի առաջին բառը հեղինակի հայրանունն է, իսկ այդ գիտնականի ազգանունը Կովալյովա է /Ковалева Эльнара Джаваншировна/:

Չնայած նշված դիտարկումներին՝ Ս. Է. Ղազարյանն իր թեկնածուական աշխատանքը շարադրել է գիտական պատշաճ լեզվով, հասկացական գործիքակազմի պահպանմամբ և

ճշգրիտ օգտագործմամբ: Աշխատանքի ձևավորումը, բովանդակությունը, ստացված արդյունքները լիարժեքորեն բավարարում են թեկնածուական աշխատանքներին ներկայացվող պահանջներին:

Ատենախոսությունն արժեքավոր ներդրում է ժամանակակից լեզվակրթության մեջ՝ իր գիտական նորարարություններով և գործնական կիրառականությամբ: Հետազոտությունը համապարփակ և արդյունավետ է ինչպես ՀՀ բուհերի, այնպես էլ միջազգային մակարդակով լեզվակրթության գործընթացի բարելավման համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ եզրակացնում եմ, որ ատենախոսի՝ «Ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման ռազմավարությունը անգլերենի ուսուցման ընթացքում» ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող բոլոր պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Սիրանուշ Էդուարդի Ղազարյանն արժանի է իր կողմից հայցած՝ ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Լուսինե Հրանտի Ֆլյան

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հաստատում եմ պաշտոնական ընդդիմախոս

բանասիրական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր Լուսինե Հրանտի Ֆլյանի ստորագրությունը

Աստղիկ Աշոտի Աբրահամյան

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,

Հյուսիսային համալսարանի գիտքարտուղար

14.01.2025